ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

1112/ 05910

07.06.2019թ.

ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե. foi@foi.am, www.foi.am
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ տնօրեն
Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի հավելումն Ձեր հարցման ԱԳՆ կողմից տրված պատասխան նամակի (ելից գրություն 1112/05727, 04.06.2019թ.)՝ Եվգենյա, Անուշ և Լիանա Դրամփյանների ԱԳՆ ուղղված նամակի և տրված պարզաբանումների վերաբերյալ, հայտնում ենք, որ նշված քաղաքացիները ԱԳՆ էին դիմել՝ խնդրելով աջակցել իրենց Իսրայելում մասնագիտական կրթություն ստանալու հարցում: Այդ կապակցությամբ Եվգենյա, Անուշ և Լիանա Դրամփյանները տեղեկացվել են, որ այս պահին Հայաստանի և Իսրայելի միջև չկան կրթության ոլորտում միջպետական փոխանակման ծրագրեր, ինչը գործնականում անհնար է դարձնում առկա հարաբերությունների համատեքստում նրանց խնդրանքն իրականացնելը:

Նրանց նամակ-խնդրանքին տրվել է ամբողջական պարզաբանում:

Կից ուղարկում ենք Եվգենյա, Անուշ և Լիանա Դրամփյանների նամակին տրված ԱԳՆ պատասխանի պատճենը:

Հարգանքով,

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝
Լրատվության և հանրային դիվանագիտության վարչություն
Հեռ. 060 620 234

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

1112/5063-19

Հասցե՝ ք. Երևան, Ե. Կողբացու 42, բն. 83, Հեռ.՝ 010 53 71 89
ՀՀ քաղաքացիներ Եվգենյա, Լիանա և Անուշ Դրամփյաններին

Հարգելի Դրամփյաններ,

Ի պատասխան ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանին ուղղված ձեր դիմումի (ՀՀ ԱԳՆ մուտք է եղել 19.03.2019թ.)՝ վերահաստատում ենք, որ ՀՀ դիվանագիտական ապարատի ջանքերն ուղղված են առկա դիվանագիտական կապերը բոլոր հնարավոր ուղղություններով ՀՀ շահերին ծառայեցնելուն, դրանք խորացնելուն և նոր կապեր հաստատելուն:

Ինչ վերաբերում է ձեր դիմումում հիշատակված Իսրայելում ՀՀ դեսպան Արմեն Սմբատյանի՝ ս.թ. մարտի 13-ին Ձեզ հասցեագրված նամակին, ապա հայտնում ենք, որ այն ուղարկվել է ի պատասխան ս.թ. փետրվարի 12-ի ձեր դիմումի, որով դուք խնդրում էիք աջակցել ձեզ Իսրայելում մասնագիտական կրթություն ստանալու հարցում:

Այս կապակցությամբ տեղեկացնում ենք նաև, որ ներկայումս Հայաստանի և Իսրայելի միջև չկան կրթության ոլորտում միջպետական փոխանակման ծրագրեր, ինչը գործնականում անհնար է դարձնում առկա հարաբերությունների համատեքստում ձեր խնդրանքն իրականացնելը: Նման ծրագրերի ի հայտ գալու դեպքում ձեզ կտեղեկացնենք լրացուցիչ:

Հարգանքով՝

Սերոբ Բեջանյան
ԱԳՆ լրատվության և հանրային
դիվանագիտության վարչության պետ

Հեռ. 060 620 234

Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն #2, Երևան 0010, Հեռ.՝ +374 60 620000, Ֆաքս՝ + 374 60 620062
Government House #2, Vazgen Sargsyan 3, Yerevan 0010, Tel: +374 60 620000, Fax: + 374 60 620062, E-mail: info@mfa.am www.mfa.am